

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

11-12 ՄԱՅԻՄԻ, 2023, ԵՐԵՎԱՆ



Այսօր աշխարհի երկրներն առավել հաճախ են բախվում համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերների, որոնք տնտեսական կյանքում մեծացնում են անորոշություններն ու դժվարացնում, երբեմն էլ անհնարին դարձնում տնտեսության կայուն զարգացումն ու բնակչության կյանքի որակի բարելավումը:

Մարտահրավերները հաճախ երկրներին ստիպում են վերանայել զարգացման առաջնահերթությունները, ինչը ենթադրում է տնտեսական քաղաքականության նոր գործիքակազմի, նոր մեթոդների և տնտեսության կազմակերպման նոր մոտեցումների գործադրում:

Վերոնշյալ հիմնախնդիրների և դրանցից ածանցվող հետևանքների վերհանման, ինչպես նաև դրանց արդյունավետ լուծման ուղիների որոնման նպատակով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը և ASECU-ն հրավիրում են մասնակցելու «Տնտեսական զարգացման առաջնահերթություններ և մարտահրավերներ» խորագրով ASECU-ի 19-րդ միջազգային գիտաժողովին:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1. Տնտեսական անվտանգության աշխարհաքաղաքական ասպեկտները. տնտեսական զարգացման նոր կողմնորոշիչներ**
- 2. Սոցիալական համայնապատկեր և բնակչություն. զբաղվածություն, աղքատություն և եկամուտների բևեռացում**
- 3. Նոր ինտեգրացիոն վեկտորների գլոբալ և տարածաշրջանային ասպեկտները**
- 4. Նոր տնտեսական համակարգի աշխարհաքաղաքական ուրվագծերը**
- 5. Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում**
- 6. Տնտեսության թվայնացում. մարտահրավերներ և հնարավորություններ**
- 7. Ֆինանսական շուկաներ և ֆինանսական ինստիտուտներ**

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարանի ռեկտոր, Հայաստան

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարանի պրոռեկտոր, Հայաստան

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՀԱՅԿ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՋՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԳՐԻԳՈՐԻՍ ԶԱՐՈՏԻԱԴԻՍ

ASECU-ի նախագահ, Սալոնիկի Արիստոտելի համալսարան, Հունաստան

ԵԼԵՆԱ ՄԱԿԱՐԵՆԿՈ

Ռոստովի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարանի ռեկտոր, Դոնի Ռոստով, Ռուսաստան

ՕԼԵԳ ԲՈՂՅԱԳԻՆ

Ռոստովի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Դոնի Ռոստով, Ռուսաստան

ՎԵՍՆԱ ԿԱՐԱԶԻՉ

Չեռնոգորիայի համալսարան, Պոդգորիցա, Մոնտենեգրո

ՖԱԹՄԻՐ ՄԵՄԱԺ

Տիրանայի համալսարան, Ալբանիա

ԴԵՋԱՆ ՄԻԿԵՐԵՎԻՉ

Բանյա Լուկայի համալսարան, Բոսնիա և Հերցեգովինա

ԼԵՈՆԻԴ ՆԱԿՈՎ

Սուրբ Կիրիլի և Մեթոդիոսի համալսարան, Սկոպիե, Հյուսիսային Մակեդոնիա

ՋԱԿԼԻՆԱ ՍՏՈՅԱՆՈՎԻՉ

Բելգրադի համալսարան, Սերբիա

ԲՈԳԴԱՆ ՎԻԵՐՉԲԻՆՍԿԻ

Ռժեշովի համալսարան, Լեհաստան

ՊԱՍԿԱԼ ԶԵԼԵՎ

Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարան, Բուլղարիա

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՀԱՅԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԱՐՄԵՆ ՀԱԿՈՔՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ԱՆՆԱ ԲԱՅԱԴՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Հայաստան

ՕԼԵԳ ԲՈՂՅԱԳԻՆ

Ռոստովի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան, Դոնի Ռոստով, Ռուսաստան

ՄԵԼԻՆԱ ՊԵՏՐՈՍԵԼԻԴՈՒ

ASECU գրասենյակի ղեկավար, Մակեդոնիայի համալսարան, Հունաստան

ԳՐԱԽՈՍՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի պետական ​​​​համալսարան

Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Հայ-Ռուսական ​​​​համալսարան

Հայկական ​​​​տնտեսագիտական ​​​​միություն

Սալոնիկի Արիստոտելի համալսարան

Ռոստովի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարան

Սուրբ Կիրիլի և Մեթոդիոսի համալսարան

Տիրանայի համալսարան

Բանյա Լուկայի համալսարան

Ազգային և համաշխարհային տնտեսության ​​​​համալսարան

Չեռնոգորիայի համալսարան

Բելգրադի համալսարան

Ռժենովի համալսարան

Հողվածների թեմատիկ և բովանդակային համապատասխանությունը գիտաժողովի խորագրին և ուղղություններին, ինչպես նաև հողվածների ներկայացում-զեկուցումը հեղինակի/ների կողմից՝ **գիտաժողովի մասնակցության պարտադիր պայմաններ են:**

Հողվածների ներկայացման լեզուն՝ **անգլերեն:**

Սահիկաշարերն ու զեկուցումները կարող են ներկայացվել 3 լեզվով՝ **հայերեն, ռուսերեն, անգլերեն:**

Հայերեն և ռուսերեն լեզուներով ներկայացումների դեպքում ապահովվելու է համաժամանակյա թարգմանություն:

Գիտաժողովի նյութերի տպագրությունն անվճար է:

Գիտաժողովի նյութերն անհրաժեշտ է ուղարկել հետևյալ հասցեով՝

science@asue.am:

Ներկայացված և զեկուցված բոլոր հողվածներն անանուն կրկնակի գրախոսությունից հետո (երկու փորձագետ-գրախոսների դրական եզրակացության դեպքում) կիրառարակվեն ISBN միջազգային ստանդարտով գիտաժողովի նյութերի ժողովածուում, որը հասանելի կլինի ASECU-ի (<http://www.asecu.gr>) և ՀՊՏՀ-ի (<https://asue.am>) պաշտոնական կայքէջերում:

ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆԵՐ

Համառոտ բովանդակության ներկայացման վերջնաժամկետ	2023 թ. փետրվարի 24
Ընդունման վերաբերյալ հաստատում	2023 թ. մարտի 3
Ամբողջական հողվածի ներկայացման վերջնաժամկետ	2023 թ. ապրիլի 15

Գիտաժողովը տեղի կունենա Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (Հայաստանի Հանրապետություն, Երևան, Նալբանդյան 128):

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- Նախապես ներկայացվում է (**մինչև 2023 թ. փետրվարի 24-ը**) հողվածի համառոտ բովանդակությունը, որը պետք է լինի առավելագույնը երկու էջի սահմանում (մինչև 500 բառ և 5-7 հիմնաբառ): Այն պետք է կառուցված լինի հետևյալ ձևաչափով. հողվածի վերնագիր, հիմնաբառեր, հեղինակի/ների անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան և կոչում, գիտական հաստատություն, հեղինակի/ների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար:
- Համառոտ բովանդակությունը ուղարկելուց հետո հեղինակը/ները ստանում են ծանուցում-հավաստում՝ ընդունման վերաբերյալ (**մինչև 2023 թ. մարտի 3-ը**): Ներկայացված համառոտ բովանդակության թեմատիկ և բովանդակային անհամապատասխանությունը գիտաժողովի խորագրին և ուղղություններին, ինչպես նաև տեխնիկական պահանջների և ժամկետների չպահպանելու դեպքերում, հեղինակը/ները համառոտագրի ընդունման վերաբերյալ հավաստում չեն ստանում և գիտաժողովին մասնակցության ներկայացված հայտը մերժվում է կազմկոմիտեի կողմից:
- Գիտաժողովին ներկայացվող հողվածը, ինչպես նաև դրա առանձին մասերը չպետք է հրապարակված կամ ներկայացված լինեն հրապարակման այլ գիտաժողովներում կամ գիտական ամսագրերում:
- Համառոտ բովանդակության ընդունման վերաբերյալ հավաստում ստանալուց հետո պետք է ներկայացվի ամբողջական հողվածը (**մինչև 2023 թ. ապրիլի 15-ը**): Այն պետք է կառուցված լինի հետևյալ ձևաչափով. հողվածի վերնագիր, հեղինակի/ների անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան և կոչում, գիտական հաստատություն, հեղինակի/ների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար:
- Գիտաժողովին ներկայացված հողվածում պարտադիր են ստորև ներկայացված բաժինները, անհրաժեշտության դեպքում հողվածի բովանդակությունը կարող է բաժանվել առանձին բաժինների՝ իրենց ենթավերնագրերով՝
 - ✓ համառոտագիր (100-200 բառ),
 - ✓ հիմնաբառեր (5-7 բառ),
 - ✓ ներածություն (100-200 բառ),
 - ✓ գրականության ակնարկ (200-800 բառ),
 - ✓ հետազոտության մեթոդաբանություն (150-500 բառ),

- ✓ վերլուծություն (1000-1500 բառ),
- ✓ եզրակացություններ (100-200 բառ),
- ✓ գրականություն:
- **Աշխատանքի տեխնիկական պահանջները:** *Swan* արեսակը՝ *Times New Roman*, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, էջի չափը՝ A4, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ: Հղումները տրվում են՝ տողատակում՝ ըստ հետևյալ հաջորդականության՝ աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (պարբերականի դեպքում՝ նաև համար) և էջ/էջեր: Միայն առցանց հղումներ պարունակող աղբյուրները տրվում են ամբողջությամբ (հղում):
- Հոդվածում ներկայացված գծապատկերները և աղյուսակները պետք է համարակալված լինեն և ունենան խմբագրական միջամտության հնարավորություն: Գծապատկերների վերնագրերը նշվում են ներքևում, աղյուսակներինը՝ վերևում:
- Աշխատանքները անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային՝ *Microsoft Word* ձևաչափով, նպատակ դաշտում նշելով՝ **ՀՊՏՀ գիտաժողով:**
- Ներկայացված հոդվածները ուղարկվելու են անանուն («կոյր») գրախոսման (երկու անկախ փորձագետների), և միայն դրական կարծիքների դեպքում դրանք ենթակա են տպագրության գիտաժողովի նյութերի ժողովածուում:
- Կազմկոմիտեն հեղինակներին չի տեղեկացնում ներկայացված հոդվածի այն փոփոխությունների և կրճատումների մասին, որոնք ունեն խմբագրական բնույթ և չեն ազդում սկզբունքային դրույթների վրա:
- Ներկայացված հոդվածի հրատարակման համար ընդունման կամ մերժման վերաբերյալ կազմկոմիտեի որոշումը վերջնական է:

Կոնտակտային տվյալներ

ՀՊՏՀ գիտության բաժին, Աննա Այվազյան

Էլ. հասցե՝ sciencedepasue@yahoo.com

Հեռ. +374 10 593 426, +374 91 356 676 (WhatsApp, Viber):